ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

28.09. 2021թ.
Ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱՎ պետ Հ. Մելիքյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, գնդապետ Վ. Ասատրյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱՎ ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Կ. Բեկնազարյան,
- ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի պարենային ծառայության պահեստների և տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հովհաննիսյան:

Ի գիտություն՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ տեխնիկական բնութագրում չի ներառվել նախատեսված գծագրերը, որը կցվել է հրավերով ARMEPS համակարգում 09.09.2021թ.:

Փոփոխվել է նաև հայտերի ներկայացման օրը և ժամը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ծածկագրով ԳՀընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58 » ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Ի Գիտություն Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել են, սակայն չեն ներկայացվել գնահատման հաջորդ փուլ, քանի որ ARMEPS.AM համակարգում առաջացել է խնդիր, որի մասին տեղեկացվել է լիազոր մարմին, խնդիրը չի կարգավորվել, ուստի 28.09.2021թ. գրություն է ուղարկվել Լիազոր մարմնին՝ խնդրին կարգավորում տալու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **ապրանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

Հ/հ	Մասնակցի անվանում
1.	«Ատես» ՍՊԸ
2.	«Պարադայս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58 » ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ **«Ատես» ՍՊԸ-ի, որի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում է ընթացակարգին մասնակցելու համար նախատեսված հայտի ապահովումը,

որի ներկայացման պահանջը սահմանված է սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4.3 կետի 4-րդ ենթակետով և 7-րդ բաժնով: **Հայտի ապահովումը** ներկայացվում է **կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (ընթացակարգի հրավերի հավելված N 3)**: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» **կարգի 41-րդ կետը՝ 28.09.2021թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.2.1 **01.10.2021թ.** կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով որ սույն արձանագրության 2.3 կետում նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունները մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է, որոշեց մասնակցների հայտը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ի գիտություն ՀՀ ֆինանսների նախարարության 29.09.2021թ. թիվ 26-1/15819-2021 գրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ծածկագրով գնման ընթացակարգի Հայտերի բացում առաջադրանքի կատարման ընթացքում առաջացած խնդրի պատճառով հայտերի գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել, ուստի առաջարկվել է քննարկել մրցույթի հետագա ընթացքը փաստաթղթային եղանակով շարունակելու հնարավորությունը: Ելնելով վերոգրյալից 01.10.2021թ. Հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/58» ծածկագրով գնման հետագա ընթացակարգը շարունակել փաստաթղթային եղանակով,

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

3.1 Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Գնման առարկա	Հ/մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընթացակարգին մասնակցող կազմակերպությունների				անվանումը	Ընտրված մասնակցի Գնային առաջարկ	
					Անվանումները	Գնային առաջարկ՝ ՀՀ դրամ Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Ջրի թիթեղյա ամաններ/բիդոն//ջրի բաք 300լ. ջ/պ՝ հենակետի/	հատ	300	37,800,000.00	«Պարադայս» ՍՊԸ	57,000,000	0	57,000,000			
2	Արկղեր/սննդամթերքի պահպանման արկղ/կոմբինացված/՝հենակետի/	հատ	300	58,200,000.00	«Ատես» ՍՊԸ	96,000,000	0	96,000,000			

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են հրավերի պայմաններին (ճիշտ են):

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58» ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին և 2-րդ** չափաբաժինների մասով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են գնման առարկայի նախահաշվային գինը հրավերի պայմաններին համապատասխան ոչ գնային պայմանները բավարարող գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը միակն է, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց **01.10.2021թ.** կայացած նիստը կասեցնել և մասնակիցներին ծանուցել, որ գների նվազեցման նպատակով **05.10.2021թ. ժամը 14:50-ին** ՀՀ ՊՆ ԳԿՎ նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվելու են բանակցություններ:

3.4. **05.10.2021թ.** կազմակերպված բանակցություններին մասնակիցները չեն ներկայացել, ուստի գնային առաջարկները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

05.10.2021թ. կայացած նիստին բացակայել է՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱՎ պետ Հ. Մելիքյանը:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58 » ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

4.1 **11.10.2021թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով հայտարարել չկայացած:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58 » ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Ա. Հովհաննիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/58 » ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Հովհաննիսյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ Հ. Մելիքյան

Գնահատող՝ Վ. Ասատրյան

Գնահատող՝ Կ. Բեկնազարյան

Գնահատող՝ Ա. Կարապետյան

Գնումները համակարգող՝ Ա. Հովհաննիսյան